

Որովհետեւ, որքան յայտնի է, ոչ մի տեղ չէ եղել ցոյց տուած ակներեւ ու հասկանալի ճանապարհ տիեզերքի վրայ այսպիսի հայեացք ունենալու համար, ուստի մենք էլ վճռեցինք հրատարակել մեր խորհրդածութիւնները, որոնք՝ կարելի է կգրգին ընթերցողներին խորհել այս՝ մեր բարձրացրած հարցերի վրայ, և ինքնուրայնաբար զարգացնել ևս աւելի մեր մեկնաբանած գաղափարները:

Երկ Երերածի. Թարգմ. ԲԺ. Մ. ԶԱՐԴԱՐԵՍՆՅ.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ

(Շաբաթականներ)

19

Սարչանոս Եղիսակողոս Օքբելան. Նորա ժահանայանը, կիշիւս քնարը և Եղիսակողոսանալը. Դաշը և նուիրաբուռնելինեւ: Խառնունիւն նորամոյժ ծէւերի առնելու. Անաւարդայ Գրիգոր Եղիսակողոսի չանուղիկոսանալը: Սորան ուղարքած նուղնը Սիւնեաց ժողովի կողմէց: Սարչանոս Եղիսակողոս Օքբելանի գրական աշխատանկունները. Նորա շնչելու, ճահանուան դարբն և հասակը: Յոհաննես Եղիսակողոս Օքբելան: Պետրոս ճէդ Օքբելանի խնդիրն և Յանալի շահի հրավարակը: Նորա կանչելի Եկեղեցւաց նշանաւագ վիճակը: Վանդին հաղաբաժին ուժականացնելու ժողովը: Քահանայ վանահայը: Մենագուանի վերջակէտը:

Նորավանքի պատմութեան շարունակութիւնը նախընթաց գլխում հասաւ մինչև Ստեփաննոս եպիսկոպոս Օքբելանի օրերը: Մենք տեսանք, որ Յօհաննէս եպիսկոպոս կապանեցուց մինչև Օքբելանը, 180 տարի, եպիսկոպոսներ յաջորդաբար

ժառանգեցին նորավանքի աթոռը։ Առաջինն եղաւ յիշեալ Կապանեցին, երկրորդը՝ Ստեփաննոս Եպիսկոպոս Մեղրեցին, երրորդը՝ Վերջինիս քեռորդի Սարգիս Եպիսկոպոսը։ չորրորդը՝ Վերջինիս քեռորդի միւս Ստեփաննոսը և Հինգերորդը՝ Վահրամ Ճգնաւորի որդի միւս Սարգիս Եպիսկոպոսն, որի ժամանակ ձեռնադրուեց Օրբելեան նախ քահանայ և ապա մետրոպօլիտ Սիւնեաց աշխարհի։

Օրբելեանի բազմարդիւն գործունէութիւնը պատանի հասակից մինչեւ մահը սերտ կտապով ամրացած է նորավանքի Եպիսկոպոսական աթոռի հետ։ ուստի անհրաժեշտ է տալ նորան պատկառելի տեղ այդ մենաստանի պատմութեան էջերում։ Նորա աղմկալի գործունէութիւնն եղել է աղմկալի ժամանակ հայ ժողովրդի համար։

Օրբելեանի անունը մեր ընթերցողներից սակաւաթիւներին է միայն յայտնի, բայց որովհետեւ այդ անձնաւորութիւնն իւր ժամանակին շատ նշանաւոր էր իրեւ մետրոպօլիտ, իրեւ պատմագիր, իրեւ ճարտասան, իրեւ քաջ պաշտպան հայտստանեաց եկեղեցւ և ազգի շահերի և այլն, ուստի հարկ է կարելոյն չափ երկարօրէն տալ տեղեկութիւնն որա մասին։

Թաթարաց տիրապետութեան ժամանակ Վայոց ձորը և սորան շրջապատող փոքրիկ գաւառները կառավարում էր հայ Օրբելեանների այն ժամանակի ներկայացուցիչ Սմբատ իշխանը, ունենալով օգնական իւր կրտսեր եղբայր Տարսայինին։ Տարսայինը հասակով ահարկու, ուժեղ և սրտոտ մարդ էր, պատերազմող և խիստ կրօնասէր և աստուածապաշտ։ Նա իւր առաջին կնոջից՝ Արուղ Խաթունից—որ թէւ Խսմայելական ցեղից բայց քրիստոնեայ էր, ունեցաւ երեք արու զաւակ։ Ելիկում, Սահեփաննոս և Փախրադուլայ։

Ստեփաննոսն էր ուրեմն Տարսային իշխանի երկրորդ որդին, որ յետոյ քահանայացաւ, Եպիսկոպոսացաւ և իրեւ Սիւնեաց մետրոպօլիտ գործեց մինչեւ իւր մահը։ Իրեւ Սիւնեաց Եպիսկոպոս կամ մետրապօլիտ՝ նա յիսունաւելեւերորդն էր, իսկ իրեւ նորավանքի առաջնորդ՝ նա Եօնիներորդն էր։

Ստեփաննոսի հօրեղբայր Սմբատ իշխանը իւր փայլուն իշխանավորութեան ժամանակ, անզաւակ լինելու պատճառով, մանուկ Ստեփաննոսին որդեգրեց և պատրաստեցնորան հոգեոր կոչման։ Երբեւ ընդունակ մանուկ, իրբեւ Սմբատ իշխանի որդեգիր և իրբեւ Տարբայիծ իշխանի հարազատ զաւակ Ստեփաննոսն ունէր յաջողութիւն կատարեալ ուսում սուանալու։

Իւր մասին իւր յիշատակարանի մէջ նաւարում է. Մնեալ և ուսեալ առ ոտո աստուածարեալ արանց։ Երեսում է որ նա ուսել էր Տարբայի վանքում և դեռ ճանաչան հասախան, ինչպէս ինքն է հաստատում։ Քահանայացաւ և կղերիկոս կարգուեցաւ ահարկու և աստուածընկոլ բեմին։ Նորա աշշակերտութիւնը թէպէտ մեզ յայտնի չէ, ասկայն նորա հոգեսոր կոչման վաղահաս հրաւիրուիլը և յետագայ ժիր գործունէութիւնը ցոյց են տալի, որ իւր աշակերտութեան ժամանակն ևս պէտք է լինէր ընդունակ, ժրածան և յառաջադէմ։

Տարսայիծ իշխանը 729 հայկական թուականին—1280 - կադմեց ժողով եպիսկոպոսների, վարդապետների և վանակունների նորավանքի մենաստանում։ Կւր աշխարհախումբ հանդիսով քահանայ ձեռնադրել տուեց Ստեփաննոսին։ Սորանից հինգտարի անցած՝ եպիսկոպոսները հաւաքուեցին Տարսայիծ իշխանի մօտ և առաջարկեցին Ստեփաննոսին գնալ Կիլիկիա հայոց կաթուղիկոսի և թագաւորի մօտ՝ Սիւնեաց աթոռի վերայ մետրապօլութեան ձեռնադրութիւնն ընդունելու։

Երիտասարդ Ստեփաննոս իւր հասակին յատուկ փառասիրական զգացմանց ներքոյ հաճութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը չիմանալով նշանաւոր պաշտօնի ծանրութիւնն և դժուարութիւնը Վերջերում՝ անձամբ փորձելով այդ դժուարութիւնները, Ստեփաննոսն իւր յիշատակարանի մէջ խոստավանում է. «Յանձն առեւոլ մեր յիմարութեամք անգիտացեալ զահարկու և անտանելի լծոյ ծանրութիւն, միայն առօրեայ փառօքն հեշտացոյ ախտաւոր մտօք»։

Համելով Կիլիկիա, Ստեփաննոսը մեռած գտաւ Տէր Յակոբ Հայոց կաթուղիկոսին, որից պէտք է ընդունէր իւր եպիսկո-

պոսական ձեռնադրութիւնը։ Ուստի հարկադրուած էր սպասել այն տեղ մինչև նորի ընտրութիւնը և այդ միջոցին Ստեփաննասը հիւրամիրուելով հայոց Լեռն Գ. թագաւորի մօտ մեծամեծ պատիւներ էր վայելում նորանից։

Լեռն թագաւորը, որի մօտ երեք ամիս հիւր մնաց Ստեփաննոս, համոզում էր նորան, ըստ ասութեան նորա՝ Ստեփաննոսի, որ մնայ այն տեղ Կիլիկիայում, և նստի հայոց կաթուղիկոսութեան թափուր աթոռը։ Սակայն այս առաջարկութիւնը չէ ընդունել Ստեփաննոսը։

Հայր Միքայէլ Զամշեան, որ Ստեփաննոս Օբբելեանի յարգողներից չէր, իւր պատմութեան մէջ յիշելով սայն իրողութիւնը, չէ ընդունում Լեռն թագաւորի յիշեալ առաջարկութիւնն, այսինքն բալորովին չէ յիշատակում, այլ շարայրում է։ «Կամեցան տապա ընտրել ոմանք զՍտեփաննոս քահանայն զորդին Տարսայինայ, բայց հարդ ժաղախայ բնաւ ու հաճեցան ընդ այն նա ասեն այր իսրուտ է։ և երեխ լինել ինքնահաճ»*)։

Վերջապէս Կոստանդին կաթուղիկոսն, որ ընտրուեցաւ Յակոբից յետոյ ձեռնադրեց Ստեփաննոս քահանային եպիսկոպոս — մետրապօլիս Սիւնեաց աշխարհի աթոռի վերայ, իբրև գլուխ այնպիսի եպիսկոպոսների, որոնք կային Սիւնեաց աշխարհի այս և այն տեղ, ոմանք կայոց ձորում և ոմանք Տաթեռում, և որոնք իւրեանց աշխարհի սուրբ Աթոռի հին պատիւը և աստիճաննը վերականգնելու նպատակով, ընծաներով և միարան թղթերով ուղարկել էին Ստեփաննոսին Կիլիկիա՝ եպիսկոպոսական աստիճանն ընդունելու։

Նորընտիր կաթուղիկոսը նորընծայ եպիսկոպոսին հագցրեց սկեթել հիւսուած հայրապետական զգեստ, իսկ գլխին գնելով պատուական թագ, սոկեգիր մագաղաթեայ շրջաբերական նամակավ հաստատեց նորան Տաթեռի աթոռի վերայ։ Նոյնպէս և Լեռն թագաւորը հագցրեց նորան հայրապետական ձեւ

(*) Զամշ. Պատ. Հայ. հ. Գ. էջ 284.

Թագաւորական հագուստ, գլխին դրեց ոսկեպատթագ (միթր), Ազա տալով նորան՝ մետրապօլտութեան աստիճանին յատուել եմիփոքն՝ և մարգարտայեռ ոռկեթել խոյր, նոյնպէս և մեծամեծ պարգեներ, և այդպիսի բարձրագոյն վառքով ճանապարհեցին նորան գէպի իւր պաշտօնատեղին, Սիւնեաց աշխարհը:

Դառնալով իւր հայրենիք՝ նորապսոկ եպիսկոպոսը թէև խնդացրեց հօրը, եղբայրներին և ամբողջ գաւառը, սակայն այժ խնդութիւնը երկարատև չեղաւ ոչ աթոռի և ոչ աթոռակալ Ստեփաննոս եպիսկոպոսի համար, Ըստ որում Տաթեւի վանքի երկու միաժամանակեայ եպիսկոպոսները, Տէր Հայրապետ և Տէր Յոհաննէս, հակառակեցան երիտասարդ մետրոպօլիտի իշխանութեանը և իւրեանց իրաւունքը պաշտպանելու համար գիմում էին թաթար իշխանների միջամտութեան: Ի՞նչ կտոկած՝ որ այդպիսի երկառակութիւնը շատ լինասակար էր Սիւնեաց աթոռի վարչութեան և եկեղեցու անդորրութեան համար:

Հայր Զաւէեանը սև գոյնով է նկարագրում այս հակառակութիւնը և Օրբելեանին շյարգելով՝ բոլոր մեղքը դնում է նորավերայ, ասելով՝ «Այլ վասն զի սոյն այս Ստեփաննոս, որ կոչէ զինքն մետրապօլիտ պուտօֆրօնդէս, որդի մեծի իշխանի էր, սկսաւ մեծամտիլ և յոխորտանօք վարիլ, և անհաւան լինիլ այլոց, և զինիլ ևս ընդդէմ քաղկեդոնականաց, վասնորոյ թըշնամացան ընդ նմա բազումք և յարուցին խռովութիւն մեծ*):»

Սակայն երիտասարդ մետրապօլիտը չընկճուեց անյաջողութեան առաջ: Թաթարաց Արդուն խանին ներկայանալով և ցոյց տալով կաթուղիկոսի շրջաբերական նամակն, ապացուցեց իւր իրաւունքը Սիւնեաց աթոռի վերայ: Արդուն խանը վերահաստատեց Ստեփաննոս Օրբելեանի եպիսկոպոսական իրաւունքն և առանձին հրամանով վերագարձրեց նորան իւր աթոռը:

(*) Զամ: պատմ: հ. Գ. էջ 284.

Վերը տեսանք, որ Սիւնեաց աշխարհի աւերման պատճառով եպիսկոպոսական աթոռը երկուսի էր բաժանուած՝ Տաթեկի և Նորավանքի։ Ստեփաննոս եպիսկոպոսն միացրեց երկու աթոռները, թողնելով երկու վանքերից իւրաքանչյիւրին իւր ունեցած վիճակն՝ ինչպէս կանխիկ հաստատել էին Յակոբ և Կոստանդին կաթողիկոսները։

Ստեփաննոս եպիսկոպոսն իւր հօր իշխանութեան ներքոյ եղած վանքերն, իբրև մարմնաւոր ժառանգութիւն, ստացել էր հօրից և վերահաստատել տուել իւր անուան Արզուն խանի կողմից։ Սոքո էին Տաթեկ, Նորավանք, Յաղացքար, Արատիս և այլ շատերը։ Այս հարստութիւնից էր որ Օրբելեանը կարողանում էր նշանաւոր նուիրատութիւն անել զանազան վանքերի, որոնց ցուցակը բերուած է նախընթաց գլխում։

Իւր մետրապօլիտութեան միջոցին Ստեփաննոս եպիսկոպոսը զբաղուեց զանազան եկեղեցիների վերանորոգութեամբ և կառուցեց Նղէգնիսում (Ալագեազ գիւղ) մի եկեղեցի, իսկ Տաթեկ վանքում սուրբ Գէորգ եկեղեցին, որ երկու անգամ նորոգուելուց՝ նորից քանդուել էր հիմքից։ Նորան աւարտեց և նուիրեց նորան 746 (1297) թուին Արիտ գիւղը, որ գնել էր իւր եղբօրից, Էլիկումից։

Այլ ևս նուիրեց նորավանքին Զուայ գիւղը, Արասաշէն, սուրբ Սահակ, Արատեսը, Քարկոփը, նոյնպէս և մի քանի այգի Առփայ գիւղում։ Իսկ Արատեսի եկեղեցիներին յատկացրեց իւր սեփական վիճակից հետեւեալ գիւղերը Դեղաբունիքում — Վանեվան, Կետանոց, Փառագունի, Մշղլաշէն, Շիկարբ, Խուլինակ, Քաւթարեանց և Դարբանդ։

Որդեգրելով իւր հօրեղբօր որդւոյն, Յովհաննէսին, Ստեփաննոս Օրբելեանը վարժեցրեց ուսման մէջ և երիտասարդ հասակում քահանայացրեց։ Իւր մահից յետոյ սոյն Յոհաննէսը ոչ միայն յաջորդեց Ստեփաննոսին իբրև Սիւնեաց մետրապօլիտ, այլ լիովին նորա շաւղով ընթացաւ Հայաստանեայց եկեղեցու պաշտպանութեան վերաբերութեամբ իբրև արժանաւոր աշակերտ իւր ուսուցչի և սնուցչի։

Ստեփաննոս եպիսկոպոս Օքելեանն Հայաստանեայց եկեղեցու հոգևոյն համեմատ մնուած և վարժուած լինելով անդորր օրտով և հաշտ աչքով էբրկարող նայել այն եղծումների վերայ, որոնք կատարուում էին նորա օրով Կիլիկիայում Ռուբինեանց հարստութեան ժամանակ: Խշանաւորներին ունանց հոգեորականների և նոյն իսկ հայ թագաւորների լատինամոլութիւնն այն աստիճանի էր համառում, որ լատինական և յունական միքանի ծէսերի ներմաւծութեամբ կամենում էին խախտել Հայաստանի այց եկեղեցու գարեւոր մաքրութիւնը:

Դործն այն տեղ հասաւ որ Յակոբ կաթուղիկոսի մահից յետոյ, 1287 թուին, Նկոն Ք. հայոց թագաւորն ջանք էր գործադրում հաւանեցնել եպիսկոպոսներին և վարդապետներին որպէս զինքոքա համաձայննեն ընտրել Գրիգոր Եպիսկոպոս Անաւարզեցուն: Բայց ընտրող ժողովի անդամներն որք էին վանականներն և առաջնորդներն, ընդդիմացան թագաւորի աշխատանքութեան ամենալավ ամելով որ Անաւարզեցին հուածն է:

Երբ մի կողմից, 1289 թուին, Հռովմայ պապը Նկոնի օրդի Հեթում երկրորդ թագաւորին ժամանակով յարդարում է հաստատալ մնալ իւր դիտաւորութեան վերայ, որ իրեւ թէ սա կամենում էր միանալ հռովմայ եկեղեցու հետ, միւս կողմից ուղարկելով թագաւորի մօտ Յոհաննէս լատին կրօնաւորին, խնդրում էր որ թագաւորը յորդորէ հայ եպիսկոպոսներին լսել և ընդունել այդ կրօնաւորի վարդապետութիւնը:

Պապականութեան և յունականութեան մէջ խճառած չեթում թագաւորը ոչ միայն հեռացրեց ժողովով Կաստանդիին կաթուղիկոսին իւր աթոռեց, այլ և սորա յաջորդ Ստեփաննոս կաթուղիկոսի գերութեան մէջ վախճանուելուց զինի, նորից յաջողեցրեց Գրիգոր Անաւարզեցու ընտրութիւնը, 1294 թուին Կիլիկիայի եպիսկոպոսների հաւանութեամբ:

Անաւարզեցին կաթողիկոսացաւ թէ չէ իսկոյն արաւ այն, ինչ որ նորանից շատ վաղուց սպասում էին, այն է ջաւը խռանել բաժակի մէջ, և այլ մի քանի ծէսեր յօնական և լատենական եկեղեցուց մտցնել հայոց եկեղեցու մէջ՝ որով մնձ աղ-

մուկ բարձրացաւ եկեղեցիներում, վանքերում, հսկածորական-ների և աշխարհականների մէջ։

Այս տիսուր լուրերը լսելով հեռաւար տեղում Ստեփաննոս մետրապոլիտ Օբբելեանն և անձամբ ճանաչելով Անաւարզեցուն և Կիլիկիայի որպիսութիւնները իւր ճանապարհորդութեան միջոցին, վրդովուեցաւ և սրտով խոցուեցաւ և վաղօրօք չարիքի առաջն առնելու նպատակով կամ գոնէ արեւելեան վանքերը ազատ պահելու համար Կիլիկիայի ձգուումներից, նա Ստեփաննոս Օբբելեանը, արեւելեան եպիսկոպոսների մէջ իբրև ամենանշտնաւորը, վոքր ժողով կազմեց Սիւնիքում (գուցէ Նորավանքում) հսկեորականներից և աշխարհականներից և մի նշանաւոր թուղթ կազմելով, 1291 թուականին՝ ուղարկեց Գրիգոր կաթուղիկաս Անաւարզեցուն, որպէս զի վերջինս յետ կանգնի իւր գիտաւորութիւններից։

Այդ թուղթը Սիւնեաց ժողավն ուղարկեց կաթուղիկոսին, Կեսարու Կոստանդին Եպիսկոպոսի ձեռքով, որ նուիրակ էր եկել արեւելեան աշխարհը Անաւարզեցու կողմից։

Յիշեալ թուղթը լուրջ հաւանութեամբ և հաստատ համաց-մամբ ստորագրեցին, բացի Ստեփաննոս Օբբելեանը, այլ ևս նո-րավանքի առաջնորդ Սարգիս Եպիսկոպոս, Տաթևի առաջնորդ՝ Գրիգոր Եպիսկոպոս, Բջնոյ աթոռակալ՝ Յոհաննէս Եպիսկոպոս, Հախակատի առաջնորդ՝ Յոհաննէս Եպիսկոպոս, Հաւուց թառի Միսիթար Եպիսկոպոս, Գովիժան գաւառի Սարգաւակ Եպիսկո-պոս, Գրիգոր Վարդապետ Բջնու, Մարգարէ Վարդապետ Եղ-բօրդիքի Վանական Վարդապետի, Դաւիթ Վարդապետ Այրա-րատայ, Եսայի Վարդապետ (իւր աշակերտների կողմից ևս)։ Խակ կողմնակալ իշխաններից ստորագրեցին Պոռշ իշխանի որդի Պապաքը, պորա որդին Էաչի (իւրեանց ազատների կողմից ևս) նոյնպէս Ստեփաննոս Օբբելեանի մեծ եղբայր իշխան Ելիկումն և սորա հօրեզրոր որդի Լիպարիտն (իւրեանց եղբայրների, որ-դոց և ըսլոր ազատների կողմից ևս)։

Թղթի վերջումն Սիւնեաց ժողովը շեշտում է հետեւալ զօ-րեղ խօսքերը. «Ի՞նչ երկարացնենք մեր խօսքերը, Ձես հաւան

Էն+ մէր նախահոյքէրի հետ դժախրո՞ն էջնել, +ան հուռամերէ հետ է ըլլն+ բարյրանալ։ Այս խօսքերը դարձրած էին Գրիգոր Կաթուղիկոսին, որոնց վերայ աւելացրած էին և այս Աւազա եթէ աւելի ինչ կամ պակաս կամիք մուծանել յեկեղեցիս մեր զոր ոչ ունիսք ի հարցն և կամ գրեալքս խոտան են առ ձեզ, յայնժամ մի աշխատ լինիք և մի զմեզ աշխատ առնէք. ըստ ձեր կամաց լիցի աշխարհդ այդ (այսինքն Կիլիկիան) և այլ ոք որ կամիցի. և զմեզ թողէք ի մեր ստրուկ գերութեանս, և մեր կացցուք, մնացուք ակն ունելով վերին այցելութեան։ Եւ նէ նադասուցական սառադաս պատժէւ+ ղլեղ, մէտ պատրաստ էմ+ է քանջուն, յադուրու և է բանապ, է ճահ և է մշունել է վերայ սուրբ և առաւելական հարցն առանդից. և այլն *):

Հայր Զամշեան, որ ատելով ատում է Ստեփաննոս Օրբելեանին, արտագրելով իւր պատմութեան մէջ թղթի վերջին կտորը չէ յիշատակում առաջին նօտրատառ պարբերութիւնը, իսկ վերջին նօտրատառ խօսքերը դուրս է կորզում թղթի վերջից. թէպէտ և շարունակում է հատուածի բովանդակութիւնը մինչև թղթի վերջին կէտը։

Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանը միայն վերոյիշեալ թըղթովը չգոհացաւ։ Անաւարզեցու նորաձեռնութիւնների վերայ նա հալուում մաշուում էր և լերգախոց լինում գիշեր և ցերեկ։ Մի առանձին թուղթ ևս գրեց նա կաթուղիկոսին վերոյիշեալ ուղղութեամբ և 1302 թուականին շարագրեց մի գրքոյկ յունաց դաւանութեան վերայ, որի մասին Օրբելեանի բարեացակամ Հայր Զամշեանը նկատում է՝ «յորում ոչ այլ ինչ տեսանի ճշմարտածէր ընթերցողաց, բայց եթէ աղճատանք ստայօդ բանից և սնոտի զըսցք տգիտական ճառից» **):

Նոյն հեղինակը գրել է ոտանաւորով և մի ողբ սուրբ էջմիած-

(*) Օրբ. Պատմ. գլ. կթ. և 2ամչ. Պատմ. Հայոց հ. Գ. էջ 291. և Օրբ. Հակաճառութիւն ընդդէմ Երկարնակաց. Կ. Պոլիս, ՌՄԵ. (1756) էջ 185—6.

(**) 2ամչ. Պատմ. Հայոց հ. Գ. էջ 292.

նի վերայ կեչառեցի Խաչատուր վարդապետի խնդրանքով:

Բայց Ստեփաննոս եպիսկոպոսի գործոց գլուխն հայկական գրականութեան մէջ կազմում է նորա՝ Սիւնեաց աշխարհի պատմութիւնը. «Պատմութիւն նահանգին Սիսական» վերնագրով, որի նիւթը ժրածան հեղինակը ժողովիլ է մեծ աշխատութեամբ հայոց հին և նոր պատմոգրերից, եկեղեցիների արձանագրութիւններից, հնագոյն նամակներից, որոնք եղել են Տաթեկ պահարաններում, և վերջապէս աւանդութիւններից:

Յիշեալ պատմութեան մէջ՝ տարաբաղդաբար բաց է մնացած այն ժամանակի գիւղաքաղաքների, աւանների, գիւղերի, վանքերի, բերդերի և այլ շինութեանց և տեղերի աշխարհագրական գրից նկարագրութիւնն, որով գժուարանում է, շատ անգամ ևս անհնարին է լինում, գտնել այժմ այս կամ այն անհետացած կամ անուանափօխուած տեղը և այլն:

Այդ պատմութիւնն, որ բովանդակում է իւր մէջ գլխաւորապէս Սիւնեաց աշխարհի անցքերը ծրդատ թագաւորի և Գրիգոր Լուսաւորչի օրերից մինչև տասներեքերորդ դարի բոլորովին վերջը, գրուած է Ամազուի նորավանքում, Թաթարաց Արզուն խանի որդի Ղազան խանի այս աշխարհում թագաւորութեան ժամանակի, իսկ Ռուբինեան Լեռն Գ. Հեթում Բաթագաւորի օրով և վերջացրած է ուղիղ 1299 թուականին*):

(*) Օրբելեանի յիշեալ պատմութիւնը տպագրուած է Մատթէոս կաթողիկոսի օրով՝ թուականին, հանգուցեալ Շահնաղարեան կարապեալ վարդապետի աշխատութեամբ, յառաջաբանով և 292 ընտիր ծանօթութիւններով. Նոյնը լսու է ընծայել Մոսկվայում 1861 թուին գիտնական Մկրտչէ Էմին առանց ծանօթութիւնների և կրում է հետևեալ վերնագիրը. «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն տանն Սիսական».

Այս պատմութեան կաջ. գլուխն իրեւ ոմն Մեսրոբ քահանայի շարադրութիւն տպագրուած է 1775 թուին Պարսկաստանի Մադրաս քաղաքում այս վերտառութեամբ. «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Արաց».

Նոյն գլուխն առանձին գրքով և Ստեփաննոս Արքեպիսկոպոսի Սիւնեաց պատմութիւնը լսու է ընծայել 1858 թուին Մոսկվայում Ռոկան Յովհաննիսեանցը, Ստեփաննոս Դուլամիրեանցի ծախով:

Բազմավաստակ և ժրածան Ստեփաննոս Օքքելեանը, 16 տարի արիութեամբ կառավարելով Սիւնեաց աշխարհի ընդարձակ թեմը մի գժնդակ և արհաւիրքով լի պատմական շրջանում, կնքեց իւր արդիւնաւոր կեանքը 752—1303 թուականին դեռ եռանդալից հասպկում և ժաղուց Նորավանքի սուրբ Նախավկայի եկեղեցու գաւթում, Սմբատ իշխանի կառուցած ժամատան մէջ, ուր այժմ նորա շիրմի մարմարիոն տապանաքարի վերայ արձանագրած է. «այս է շիրմ հանգստեան մեծի Մետրոպօլիտ Սիւնեաց Ստեփաննոսի», ինչպէս արդէն յիշել եմ նկատողութեանց Խ. գլխում:

Մինչև այսօր ինձ պատուհած չէ մի պատմական աղբիւր, որ ցոյց տար Ստեփաննոսի հանգստեան տեղը և մեր բանակըներից՝ Հայր Միքայէլ Զամշեան, Կարապետ վարդապետ Շոհնազարեան, Մկրտիչ Էմին, Սարգիս Կպիսկոպոս Զալալեան, Ոսկան Յովհաննիսեան, Կարապետ Կոստանեան և այլք, որոնք քիչ թէ շատ խօսել են Օքքելեանի մասին, ոչ ոք չէ ցոյց տուել նորա գերեզմանի տեղը: Բայց վերսոյիշեալ տապանագիրը տեղիք չի տալի երկբայելու Ստեփաննոսի գերեզմանը Նորավանքում լինելու համար: Այստեղ և պէտք է լինի՝ քանի որ Օքքելեանց տոհմի բոլոր անդամոց գամբարանը Ամաղուի Նորավանքն էր:

Ուրեմն թող լինի պատմական իրողունիւն, որ Ստեփաննոս Օքքելեանի նշխարները հանգստանում են Ամաղուի սուրբ Նախավկայի տաճարի արեւմտեան դրան առաջ, Սմբատի ժամատան մէջ, այն մարմարիոն տապանագրի տակ, որ յաճտիւակի ընկնդոմ է ժամաստուն մոռնողների ուստաց մակ: (Պ. Խ.):

Ստեփաննոսի մահուան տարւու մասին նորինդէս տարբեր կարծիքներ կմն, որոնց ջիմունքները ինձ յայտնի չեն: Հայր Զամշեան*) ընդունում է 753 հայկական կամ 1304 փրկչական թուականը: Ոսկան Յոհաննիսեան**) հետեւելով Զամշեանին՝

(*) Զամշէ պատմ. հայր Հ. Գ. էլ. 292.

(**) Յոհան. պատմութիւն Օքքելեան Մոոկլ. 1858 թ. յառաջաբան:

ընդունում է վերոյիշեալ թուականը։ Խոկ կ. Կոստանեան*) ընդունում է 1305 թուականը։

Սակայն ԽԴ. գլխում արտագրած Ստեփանոս եպիսկոպոսի տապանաքարի թուականը 285. — 752 ապացոյց է որ յիշեալ հեղինակները ճիշդ չեն իւրեանց կարծեաց մէջ։ Ուրեմն ըստ տապանագրութեան՝ Ստեփանոս Օրբելեանը կնքել է իւր մահկանացուն 1303 փրկարան թուականին։

Այս բոլորից յետոյ ծագում է մի ինդիր ես, որ հասակում զրկուեց կեանքից մեր պատմագրիը։ Կամ այլ խօսքերով՝ Ե՞րբ է ծնուել նա։ Ահա մի հարց որ բաց է մնացել վերոյիշեալ բոլոր հեղինակների կողմից։

Նորա ենթագրական լուծումն ես կամենում եմ որոնել նոյն Օրբելեանի պատմութեան և վանքերի արձանագրութեանց մէջ։ Նորավանքին նախավկայի եկեղեցու պատի մի արձանագրութեան մէջ**) Լիպարիտ Օրբելեանը հայոց 670 թուականին, արեշատութիւնն է խնդրում իւր որդւոց շարքում և կրտսեր որդու, Տարսայինի, Ստեփանոս Օրբելեանի հօր համար։ Ուրեմն 670 թուին Տարսայինն արդէն ծնուած էր։

Պատմութիւնից ու Տարսայինի սեփական տապանաքարից ճիշդ յայտնի է, որ նա մեռաւ 739 թուին այն է 1290 փրկարան թուականին։ Եթէ նորա հասակն ընդունենք «Եսաու» տարեկան, նա ուրեմն 670 թուին կլինէր 10 — 11 տարեկան։ Ցապացքարի (Լոշավանք) սուրբ Կարապետի եկեղեցու պատի վերայ մի արձանագրութեան մէջ***). Տարսայինը 700 թուականին յիշում է իւր ամուսնուն, Մինա խաթունին։ Ուրեմն նա այդ ժամանակ արդէն ամուսնացած էր այդ իշխանուհու վերայ։

Բայց չէ՞ որ Տարսայինը Մինա խաթունի հետ միասին ունէր

(*) Կոստան. ՈՂբ հ. Ս. Կաթուղիկէն. Թիֆլի 1885 թ. յառաջարան.

(**) Զալալ. Ճանապ. Հ. Բ. Էջ 174.

(***) Զալալ. Ճանապ. Հ. Բ. Էջ 161.

և մի ամուսին և՛ Արուղ խաթուն, որի հետ նա շատ առաջ պստկուել էր: Ենթադրելով որ նա պսակուեց Արուղ խաթունի հետ 30 տարեկան հասակում, ուրեմն առաջին ամուսնութիւնը նորա պէտք է լինէր 8—10 տարով երկորդ ամուսնութիւնից կամ 700 թուականից առաջ:

Տարսային Արուղ խաթունից ունեցաւ կարգով երեք որդիք՝ Ելիկում, Ստեփաննոս և Փախրադօլա: Եթէ ենթադրենք որ անդրանիկ և երկրորդ որդիք ծնուեցան մինը միւսից հինգ տարի յետոյ, այն ժամանակ կերեւի որ մօտ 700 թուին արգեն ծնուած էր Ստեփաննոսը:

Սորա հօրեղբայր Սմբատ իշխանն անզաւակ լինելով՝ որդեգրեց Ստեփաննոսին և տուեց նորան ուսման «ի հրահանգ» քահանայութեան: Սմբատ իշխանն այդ արաւ իւր իշխանավարութեան շրջանում, այն է 700—722 թուին, երբ Ստեփաննոսը հաւանականօրէն պէտք է լինէր 15—20 տարեկան:

Հետեւաբար, երբ 729 թուին նորավանքի ժողովում Ստեփաննոսը կոչուեց քահանայութեան, այդ ժամանակ նա պէտք է լինէր 25—30 տարեկան:

Ճիշտ է, Ստեփաննոսն իւր վերաբերութեամբ ասում է «Տանձական ոչիւ կարգեալ կղերիկոս ահարկու և աստուածընկալ բեմին», բայց մանկական տիօք, իմ կարծիքով, չէ հակասում իմ ենթադրութեանը, ըստորոշմ մանկական տիօք պէտք է հասկանալ երիտասարդ հասակ:

Նոյն իսկ Ստեփաննոսն իւր Փախրադուլա եղբօր մահուան առթիւ ասում է, որ նա մեռաւ ի զարդ և ի գեղ հասակի, մինչ տէգ մօրուացն փազփեալ լինէր թխատիպ տեսակաւ շուրջ բոլորեալ զպատշաճագեղ ծնօտիւք և այլն: Այն ինչ այս թուի մօրուաւոր, ուրեմն մօտ 25 տարեկան մեռած Փախրադուլայի տապանաքարի վերայ գրած է «հրաշագեղ մանկան և քաջազաւը երիտասարդին»:

Հետեւաբար եղիսկոպոսական աստիճանն ստանալու ժամանակ, 736 թուին, Ստեփաննոսն էր 32—37 տարեկան: Այնուհետև՝ Սիւնեաց ընդարձակ թեմը 16—17 տարի կառավարե-

լուց յետոյ, մեռաւ 752 թուին, ուրեմն 50 — 54 տարեկան հասակում։ Սոյն ենթադրութեան հիման վերայ հաւանական է ընդունել, որ Ստեփաննոս Օրբելեանը ծնուած է մօտաւորապէս 698—700 հայոց թուականին։ Եթէ այս ենթադրութիւնը մօտիկ չէ ճշմարտութեան, շատ ևս հեռու չէ կարելի ընդունել նորան։

Ես այսպէս որոշելով եռանդալից, արդիւնաւոր, գործունեայ Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանի հառակը, մահուան տարին և գերեզմանը, ես խոնարհութեամբ համբուրում եմ մեծարանաց արքանի ոսկերոտեաց շիրմաքարը և վերջացնում եմ ընդ միշտ խօսքս այս անձնուարութեան վերայ։

Անձանձիր եպիսկոպոս Օրբելեանին յաջորդեց նորա ձեռնասուն և ազգական Յոհաննէս եպիսկոպոս Օրբելեանը։ Մնուած և կրթուած իւր նախորդի ուղղութեամբ, այս եպիսկոպոսը իւր ամբողջ գործունէութեան մէջ չշեղուեց իւր ուսուցչի շաւղից։ Սորա օրով գեռ ևս կենդանի էր և գործում էր վերոյիշեալ հայոց կաթուղիկոս Գրիգոր Անաւարզեցին, որ 1305 թուին, հաւատի վերաբերութեամբ գրած թուղթը արեւելեան եպիսկոպոսների կարգում աւածինը սոյն Օրբելեանին ուղարկեց։ Բայց Յոհաննէս եպիսկոպոսը իւր անկարողութիւնը այդ խնդրումը յայտնեց թղթով՝ Գրիգոր կաթուղիկոսին և յանդիմաննեց Զաքարիա եպիսկոպոս Ծործորեցուն, որ առանձին եռանդով սկսել էր մոցնել հայոց եկեղեցու մէջ կաթուղիկոսի առաջարկած նորաձեռութիւնները։

Իւր ուղղութեան համար Յոհաննէս եպիսկոպոսը նոյնպէս հաճելի չէ հայր Զամշեանին, սակայն վերջինս այնուամենայինիւ չէ ուրանում եպիսկոպոսի աւաւելութիւնները՝ ասելով թէ «էր ինքն երեւելի և բանի նորա անսային» բազումք ի բնակչաց մեծին հայոց»։ Զամշեանի ասելով Յոհաննէս եպիսկոպոսը վարում էր միանդամայն և մարմնաւոր իշխանութիւն։ Սիւնեաց աշխարհում։ Վերջին հանգամանքը գուցէ չափազանցեցրած է տակուն պատմաբանի կողմից։ ըստ որում Յոհաննէսի օրով գոնէ Ալայոց ձորի սահմաններում կողմնակալ և իշխանաց իշ-

խանէր Բութիկ Օրբելեանը։ Եղանձի ՏԵՇ առան զատկ քայլ
Յոհաննէս Կապիօնակողը իւր իշխանավարութեան ժամանակ
կառուցեց միսիրուն որբատաշ և նրբաշէն Եկեղեցի Առաջ
գիւղում որբ գետ և մասամբ կանգուն է։ Նա մեռաւ 1324
թուին Ա Թաղուեց Նորավանքի տոհմական դամբարանում
Ստեփաննոս Օրբելեանի կողքին։ Նոր մարմարիոն տապանաքա-
րի վերայ գեղեցիքի որբագրութեամբ գրած են հետևեալ ազդու-
խօսքերը։ «Ճուն վմաստից և հանճարոյ Օրբել Յոհաննէս Հռչա-
կաւոր մետրոպոլիտ Արքանեաց» և այլ ու շահարացներ և միջա-
Արքանեաց ահա կարուում է Ամազուի Նորավանքի պատմու-
թեան թելը։ Բայց այս ընդհատումը միայն մեզ համար է, իսկ
վանքի կեանքը վատ թելաւ ընթացել է իւր ճանապարհով։
Եղել են այսուեղ և եպիսկոպոսներ և միաբանութիւն և այլն։
Առածիս ապացոյց կարող է լինել այն, որ 1569 թուին ոմն Եղի-
շաս եպիսկոպոս մի խաչքար է կանգնեցրել իւր հօրեղբօր Առա-
քել եպիսկոպոսի հոգւոյց փրկութեան համար։ Սբքատի ժամա-
տան տապանաքարերի շարքում մինը 1571 թուից պատկանում
է Առաքել եպիսկոպոսին։

Սորանից յետոյ Նորավանքում այլ և շենք գտնում ոչ մի
արձանագրական տեղեկութիւն։ Մեզանից մօտ ժամանակում՝
այն է Պարսից աղա Մահամմատ շահի օրով և յետոյ Նորավան-
քը և ամսզու գիւղը Եղել են Օրբելեան տոհմի վերջին մնա-
ցորդաց մի քանիսի ձեռքում և գիւղի հողային բերքերի հա-
սոյթը յատկացրած է Եղել վանքին։

Ստկայն այս իրաւունքը սակաւ առ սակաւ խախտուելով և
խանճարուելով Օրբելեանք ազատօրէն յէին տիրում գիւղին
և վանքին և վերջինս հետեւաբար զրկուում էր Եկամտից՝ մին-
չեն որ 1813 թուականին Օրբելեանի խնդրանօք Պարսից Ֆաթա-
լի շահը իւր բարձրագոյն հրովարակով կրկին վերահաստատեց
գիւղը Օրբելեանների վերայ և նորա հկամուտը վանքին։

Այստեղ յիշատակում եմ նախ Օրբելեանի ինդրի և երկրորդ
ժամանի շահի հրովարտակի պատճէնները պտորսկերէնից հայ
թարգմանութեամբ։ Խոկականը և անձամբ տեսել եմ Հին Նա-

իսիջեանում Օրբելեանների մի անդամի (Անդրէաս) մօտ, իսկ թարգմանութիւնն ինձ համար արել է նոյն քաղաքացի կասիմ բէգ Վեազիրովը։ Ահա պատճէնները ։

Աստուածային զօրութիւն ունեցող, Աստուածային շուշանման և տիեզերքի ոգիները զոհ ընդ ունող նուրբ թագաւորի ծիրկաթին չափ բարձրութեան ատենին՝ և արքայական պալատի շէմին, բոլոր մարդկան ցից նուաստիս խնդիր։

«Նուաստ Պետրոս բեգ Մելիք Սամ բէգի Օրբելեանց, որ այժմ նուրբ և մեծ փոխարքայի ասպանդանակ բանող սարուկների (թիկնապահ) կարգումն է և ուր նա պատրաստ է զոհել իւր անձը, Քո շնորհալի ուաց հողին զոհ լինինք։»

«Ամազուի գիւղի կարմիր վանք (Ղղլվանք) եկեղեցին, որ մեր, այս Զեղ համար աղօթարարների, Նախնեաց շինութիւնն է և որ Սաֆաւի տոհմի թագաւորներից դրախտաբնակ հանգուցեալ Սուլթան Աղայ Մահամմադ շահի ժամանակից հրամաններով և հրովարտակներով յաւիտեան այս թշուառականների ձեռքումն էր, այժմ՝ ի սրտէ ծառաներիդ ցանկութիւնն է, որ բարձրագոյն դիվանատանից հետեւի աստուածազօր և արեգակնապայծառ արքայական հրովարտակ, որպէս զի նոքա, կը զըլվանք եկեղեցին և յիշեալ գիւղը, նախկին հրամաններին համաձայն, լինին նուաստ սարուկներիդ ձեռքումն և ոչ մի մարդ չվստահանայ ձեռք զարկել նորանց, ինչպէս և առաջ։

«Սորանով մենք կարող էինք պահպանել յիշեալ եկեղեցին, որի վերայ, ինչպէս նախնի ժամանակիներում, այժմ ևս նորից ծախսուէին Ամազու գիւղի հողային բերքերի օքուտները, որով լլինինք Զեր մշտնջենական պետութեան աղօթարար։»

Պետրոս Օրբելեանի խնդրի վերայ գրած է Ֆաթալի շահի հրո-

վարտակն, որի սկզբի վերայ դրոշմած է նորա պետական կնիքը։
Հրովարտակի պատճենը հետեւ ետև է։

«Յանուն ամենաբարձր»

«և ամենողորմած Աստվածոյ»

«Սաֆաւի հարստութեան պատկանող գրախտաբնակ Աղայ
Մահամեմադ շահի Փարմանները և հրամանները դիտողութեան
առնելով յայսնագործուեց, որ Կարմիր վանք մենաստանը Ամու-
ղու գիւղի մօտ կազմում էր բարձրաստիճան, նուաստ Մելիք
Ամբեգ Օրբելեանի որդի, անկեղծ և հաւատարմագոյն Պետրոս
բէգի նախնեաց ժառանգական սեփականութիւն։

Որովհետեւ շատ տարիների ընթացքում, Նախչուան—Դա-
րալագեազ մշալի յիշեալ գիւղի բոլոր եկամուտը ժողովուել և
յտուկացուել է Կարմիր վանք մենաստանին, վասնորոյ մեր բարձ-
րագոյն բարեհաճութիւնը սփուլում է բարձրաստիճանի գը-
րութեան վերայ։ Նախկին հրովարտակներին համաձայն՝ Ամու-
ղու Կարմիր վանքի իրաւունքը մենք բարեհաճում ենք սեփա-
կանացնել բարձրաստիճան Մելիք Սանբէգի որդի հարազատ,
բոլոր հայերից նոխամեծար Պետրոս բէգին։

Նա իւր երկու բարձրաստիճան եղբայրների, Խոախան բէգի
և Քեշիշ Կարաբէգի հետ միասին, ինչպէս տառ, նոյնը այժմ
և յաւիտեան ազատ են պետական ամենատեսակ հարկերից և
էօղ բէգեանների աղնուականների և մեծամեծների կողմից յա-
ռաջացած պատահարներից։ Եւ այս նորա համար է որ նոքար
յիշեալ գիւղի բոլոր եկամուտը գարձնելով վանքի օգտին, կա-
րողանան խաղաղութեամբ աղօթել այս պետութեան մշտնջե-
նական յարաւեռութեան համար։

«Վասնորոյ՝ իմ հարազատ որդին, աչքիս լոյսը, հռչականուն
և աստղափայլ գահաժառանգ Արաս—Միրզան, համօրէն Ատըր-
պատականի հրամանատարը կհրամացի Ատըրպատականի բոլոր
մեծամեծներին չպահանջել յիշեալ բարձրաստիճաններից նաև
ոչ մի դինար հարկ։ Եւ Ամողու գիւղի ամբողջ եկամուտը կյատ-
կացնի բարձրաստիճան Պետրոս բէգին, որպէս զի նա իւրա-
քանչիւր տարի գաձնի այդ եկամուտը վանքի օգտին։»

«Հրամայագրովում է բարձրաստիճաններին, ազնուականներին, նախամեծաբներին, պալատականներին և բարձր Սափոներին մտցնել այս շնորհածիր հրովարտակն երկրի բոլոր մատեանների մէջ և պահպանել իթքե ձեռնորդկ»:

«Դրուած է Ռազմաքաղաք Մուրաջաբայ ամսում՝ 1229 թուականին»:

Հրովարտակի տակ ստորագրութիւնների փոխարէն՝ դրշմած են գառնելլոց կնիքը, կրելով իւրեանց տիրոջ անունները, որք են Մհամմադ, Խամայիլ, Մհամմադալի, Մեհմի, Ալի և այլն»:

Այս հրովարտակից պարզ երեսում է, որ Ամաղուի եկամուտը ստանալիս է Եղել նորավանքի մենաստանը և այդ իրաւունքը Եջմիածնի հոգեւոր վարչութիւնը հաւանականօրէն ձեռքից չէր թողնիլ՝ եթէ յիշեալ հրովարտակի գոյութիւնը յայտնի լիներ նորան։ Վանքապատկան կալուածքը այժմ՝ մասնաւոր մարդու սեփականութիւն է։ Ինչպէս շատ անգում յիշուած է նախընթաց գլուխներում։

Այժմ՝ նորավանքը ոչ միայն չունի սեփականութիւն կամ եկամուտ, այլ նոյն իսկ վանքը գտնուում է այլոց կալուածի մէջ։ Ամողու գիւղը մուլքագարական իրաւունքով պատկանում է Երեանաբնակ Ստեփաննոս Եղիազարեանցի ժառանգութիւններին։ Իոկ գիւղը, հողը և մենաստանի շրջակայքը լինում են նոյն գիւղի թուրք լինակիչների ձեռքում։

Այս է պատճառը, որ այդ թուրքերը, 1857 թուից առաջ և յետոյ ոչխարանց էին գարձրել հոչակաւոր նորավանքը, Սիւնիաց թեմի աթոռը, պատմական որբավայրը, Օրբելեանց տոհմի գամբարանը։ Երբ 1857 թուին երկու քահանայք և Յ. Բաբոյեան արձանագրութիւններ էին ժողովում Զալալեան եպիսկոպոսի ճանապարհորդական գրքի համար, նոքա մեծ ջանքով մաքրել են տուել մենաստանը ոչխարի հօտի արտահօսութիւնից որպէս զի բացուին Օրբելեանց տոհմի տապանագարերը։

Հենց իմ ճանապարհորդութեան ժամանակամիջոցում Ամաղուի թուրքերի յանդգնութիւնը մինչև այն աստիճանի էր հասնում, որ Երբեմնակի արգելում էին հայ ուխտաւորների

այցելութիւնը, Վանքը պահող Առվայեցի Մկրտիչ քահանոսին շէին թողնում պարսպի տակ, արտաքուստ կանոչեղէն ցանելու մի քանի քայլ տարածութեան վերայ, պնդելով որ գետինը իւրեանցն է, իսկ քահանայի հսկողութեանը ենթարկուում են միայն վանքի աւերակ պատերը:

Թուրքերի այս անպատուաբեր վարմունքը տեղիք տուեց ինձ և այն ժամանակի տեղական հաշտարար դատաւոր Յարութիւն Սարուխանիք գետանցին անմիջապէս դիմել միասին կալուածատէր Ստեփաննոս Եղիազարեանցի մեծահոգութեանը և ինդրել որ նա սեփականացնի վանքին մի որոշ հողաբաժին վանքի շուրջը: Պէտք է ասել որ այժմ հանգուցեալ Ս. Եղիազարեանցը յօժարութեամբ ընդունեց մեր խնդիրը և խոստացաւ յատկացնել վանքին նորա շուրջը և առուակի ձորը:

Այս խոստման մասին վանքի տեսուչ Մկրտիչ քահանան գիմեց Եջմիածնի Սրբազն Ախնօդին հաճութիւն և թոյլտուութիւն խնդրելու: Սինօդը, Հրամանագրութեամբ 1877 ամի նոյեմբերի 22-ից № 2791, յառաջ բերաւ այդպիսի նուիրատուութիւնների մասին եղած օրէնքների յօդուածները, որով գործը շատ և շատ բարդուում էր գժուարութիւններով: Հարցը մնաց անկատար:

Անտէր, անտիրական մնալով նորավանքի մենաստանը շարունակում էր լինել ոչխարանոց և աղբանոց և այդ այն շրջանում երբ տեղական գտառառական իշխանութիւնը յաճախակի շրջում և տեսնում էր այդ ապականումը քրիստոնէական տաճարի տեսնում և լուսում էր, կարծես հնութեանց պահպանութիւնը նորանց հոգսից գուրս է, նոյն շրջանում կար և կայ կովկասեան հնագիտական ընկերութիւն, որի կանոնադրութեան մի յօդուածը պարտաւորացնում է ընկերութեանը պահպանել կովկասում հնութիւնները

Ընթերցողը տեսնում է թէ երբեմն հաչակաւոր, հարուստ, լուսաւոր մենաստանը ինչպէս առողինանաբար, քայլ առ քայլ մօտեցաւ իւր կորստեանը, իւր քայլայմանը և որքոն մեզ մօտ ժամանակ, այնքան և արագ: Թաթարաց, Պարսից, Ցաճկաց վա-

ղեմի խրոխտ յարձակումներից կարողացաւ գուշս գալ ոյդ մենաստանը, որպէս զի իւր թշուառ մնացորդները հասցնի մինչև մեր օրերը, ներկայ անհոգ սերնդին:

Որպէս զի գոնէ քարը քարի վերայ պահուի և թուքերի ապականութիւնից ազատուի այդ մենաստանը, Սրբազն Սինօդն, 1872 թուի Մարտի 27 հրամանագրով տեսուչ նշանակեց վանքի վերայ Առ.փայ գիւղի ծխատէր քահանայ տէր Մկրտիչ Տէր Մկրտչեանցին, որ իրրև ծխատէր՝ հաղիւ կարողանում էր այցելել վանքին միայն կիւրակի օրերը, գարնան և ամսու եղանակին: Քահանայի օգնականն էր Խաչիկեցի ալեզարդ Անդրէասը:

Վանահայր քահանան ութ վերստ հեռաւորութեամբ Առ.փայից յաճախակի չէր կարող այցելել վանքին, բայց յաճախելու ևս կարիք չկար, քանի որ Հսկելու բան չկար: Ենթունի Անդրէասը գիշեր ցերեկ մէջակ մնում էր այդ ամայի տեղը, մի անմարգաբնակ խոր ձորի մէջ, որպիսին նորավանքի ձորն է, մոքրում էր ժամատունը և եկեղեցին և սպասում էր որ կիւրակի օրը գայ վանահայր քահանան և երկուսը միասին սպասում էին որ և է այցելուի:

Զմեռ ժամանակ կարիք և միջոց չկար վանքում մնալու, ուստի վանահայր քահանան նստում էր իւր տանը, իսկ Անդրէասը ամբողջ վանքը յանձնում էր մի փոքրիկ մետաղէ փականքի արթուն հսկողութեանը՝ ինքը բանալու հետ հանգստանում էր Խաչիկում մինչև գարնան սկիզբը: Սակայն Մկրտիչ քահանան և ծերունի Անդրէասը որբան ևս փոքրիկ անձնաւորութիւն լինէին, այնու ամենայնիւ մենաստանի վերաբերութեամբ մեծ նշանակութիւն ունէին: Այցելուն գալով վանքը, գիտէր որ վայրենի տեղ չէր գնում, գիտէր որ այնուեղ կգտնի մարդունշոյլ, մարդու շունչ: Այս ևս մի տեսակ միտիթարութիւն էր:

Բայց տարաբաղդ վանքի ճակատագիրը այլ կերպ էր տնօրինել: Մօտ ժամանակում մեռաւ Մկրտիչ քահանան իրրև ծերացեալ մարդ. մեռաւ և Անդրէասը և պատմական զառամեալ մենաստանը նորից մնաց անտէր անտիրական. :

Սորանսկի վերջացնում եմ Ամաղուի նորավանքի ամփափառութիւնը:

(Եաբունակէլ) **ՔԱԶԲԵՐՈՒՆԻ**
ԱԶԳԱՅԻՆ

Կիրակի, յունիս ամսոյ 3 ին Ս. Աթոռում մեծ հանդիսով տօնուեցաւ Ա. Էջմիածնայ տօնը: Շաբաթ երեկոյեան նորին Օծութիւնը նախատօնակին եկեղեցի իջաւ հանդիսաւոր կերպով: Բոլոր միաբանք շուրջառազգեստք, երկու վարդապետք և երկու սարկաւորոնք բուրգվառներով՝ քշոցակիրներ, կերպնակիրներ ու խաչ ու խաչուարակիրներ հանդիպեցան նորին Օծութեան Վեհարանի դրան, ուր Վեհափառ Հայրապետը շուրջառ առնելով մտաւ ամպհովանու տակ և խաչը ձեռին օրհնում էր երկու կողմում խոնուած բազմութիւնը: Հայրապետի առաջին տանում էին Կաթողիկոսական քայլը, հովուական գաւազան ու խաչը, չորս բուրգվառակիրները խնկարկում էին: Երգեցիկ խումբը շարական երգելով առաջնորդեց դէպի եկեղեցին, որ լիքն էր բաղմութեամբ:

Հանդիսականք կանգնեցան Իջման սեղանի առաջ, որ լուսաւորուած էր նրան շրջապատող բազմաթիւ կանթեղների և մոմերի լուսով: Նորին Օծութեան համառօտ մաղթանք կատարելից յետ, սկսաւ երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը Իջման սեղանի առաջ: Երեկոյեան հրավառութիւն էր Տաճարի բակում և խուռն բազմութիւն շրջում էր զուարճանալով գեղեցիկ տեսարանով: Ճեմարանի երգեցիկ խումբը Վեհարանի առաջ կանգնած երգում էր ազգային երգեր:

Միս օր առաւօտեան ժամերգութեան ու Ս. պատարագին նոյնպէս ներկայ էր նորին Օծութիւնը: Կէս օրին Ս. Աթոռոյս սեղանապտանը պատրաստուած էր ճոխ հացկերոյթ, հրաւիրուած էին